ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՆՈՐԻՑ ԿԱՊԻՏԱԼԻ ՆԱԽԱՍԿԶԲՆԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Կ. ՁԱԼՈՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1959 թ. առաջին համարում զետեղված է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի «Արդյոք միջնադարյան Հայաստանում տեղի ունեցել է կապիտալի նախասկզբնական կուտակում» հոդվածը, որը, մեր կարծիքով, թե՛ մեթոդոլոգիական և թե՛ փաստական նյութի ներկայացման ու վերլուծման տեսակետից անընդունելի է։

Չկա և չի կարող լինել վեճ այն մասին, որ X—XIII դարերում Հայաստանի հին քաղաքները հասան զարգացման նոր աստիճանի, միաժամանակ առաջացան նոր քաղաքներ, որոնք թե իրենց արտադրական ու սոցիալական կյանքով և թե կուլտուրական աշխարհով խիստ տարբերվում էին հելլենիստական կամ վաղ ֆեոդալիզմի քաղաքներից։ Անվիճելի է նույնպես, որ այս շրջանում արհեստները անջատվում են գյուղատնտեսությունից, ենթարկվում են դիֆերենցիացիայի և ծայր աստիճանի մասնագիտացման։ Արհեստների մեջ առաջ է գալիս մեծ չափերի հասնող աշխատանքի բաժանում։ Խարսխված լինելով ապրանքային արտադրության վրա, նրանք ներգրավվում են շուկայական ոլորտը։ Անվիճելի է առևտրա-վաշխառուական կապիտալի ուռճացումը, հսկայական հարստություններ կուտակումը այսպես կոչված մեծատունների ձեռքին, վերջիններիս խոշորագույն դերը երկրի տնտեսական կյանքում և միջազգային շուկայական հարաբերությունների մեջ։ Այստեղից բխում է փողի դերի հարաճուն բարձրացումը, դրա պահանջը սոցիալական բոլոր շերտերի մոտ, այնպիսի երևույթների առաջացումը, ինչպիսիք են գրամական ռենտան և կամ բանկային օպերացիաները։

Չի ժխտվում նաև այն, որ գյուղում այս կամ այն չափով տեղի էր ունենում անմիջական արտադրողի ունեզրկումը, որի հետևանքով քաղաքներում առաջ է գալիս чернь*-ը, իսկ վերջինիս շարքերից՝ մշակը և վարձկանը։ Վերջապես, վիճարկության առարկա չեն այն որակական տեղաշարժները, որոնք այդ նույն ժամանակաշրջանում առաջացան հայկական կուլտուրայի, նրա աշխարհայեցողական հիմքերի ընդգավառում։ Կրկնում ենք, թվարկած բոլոր հարցերի շուրջը չկա և ոչ մի վեճ։ Տարաձայնություններն առաջանում են այն ժամանակ, երբ սահմանվում է նշված տնտեսական, սոցիալական և կուլտուրական երևույթների զարգացման աստիճանը, նրանց տենդենցը, երբ փորձ է արվում որոշել նրանց էությունը, ինչ լինելը։*

Ֆեոդալիզմը արտադրական հարաբերությունների մի սիստեմ է, որտեղ անմիջական արտադրողը՝ գյուղացին անձնական կախման մեջ է ֆեոդալից՝

հողի սեփականատիրոջից և գտնվում է արտատնտեսական հարկադրանքի տակ։ Որպես այդպիսին, ֆեոդալիզմը Հայաստանում զարգացման իր նոր էտապը դրսևորեց սկսած X դարից։ Զարգացման այս նոր շրջանը բնորոշ է նրանով, որ ֆեոդալիզմին հատուկ բնական (նատուրալ) տնտեսության տիրապետությունը խախտվում է. առաջ է գալիս ապրանքային տնտեսություն։ Տնտեսական փոփոխության այդ հիմքի վրա առաջանում են երևույթներ, որոնք արտահայտում են ֆեոդալիզմի իմանենտ հակասությունները, հանդիսանում են ֆեոդալիզմի որպես հասարակարգի, քայքայման սիմպտոմներ։ Մինչդեռ Աշոտ Հովհաննիսյանը փորձում է հավաստիացնել հակառակը. նա գտնում է, որ Հայաստանի «պարզ ապրանքաարտադրության պայմաններում ֆեոդալիզմը ոչ թե քայքայվում էր, այլ, ընդհակառակը, մտնում զարգացման իր բարձր շրջանը»[1]։

Մարքսիստական գրականության մեջ ընդունված է պարզ ապրանքային արտադրություն անվանել քաղաքի արհեստների և գյուղի արտադրությունը փոխանակության համար, արտադրություն, որ հիմնված է մասնավոր սեփականության և անձնական աշխատանքի վրա։ Ինքնին հասկանալի է, որ պարզ ապրանքային արտադրությունը նախորդում է կապիտալիստական արտադրությանը։ Անցնելով զարգացման որոշ աստիճաններ, այդ պարզ ապրանքային արտադրությունը մնում է որպես միակ ապրանքային արտադրություն նաև այն ժամանակ, երբ ֆեոդալիզմի ընդերքում առաջանում է կապիտալի նախասկզբնական կուտակումը։ Հետևաբար, պնդել, թե պարզ ապրանքային արտադրության առկայության պայմաններում «ֆեոդալիզմը ոչ թե քայքայվում էր, այլ, ընդհակառակը, մտնում զարգացման իր բարձր շրջանը» ճիշտ չէ։ Անվիճելի է, որ նախասկզբնական կուտակման ժամանակաշրջանում գործում է ոչ թե արտադրության կապիտալիստական եղանակը, այլ մինչկապիտալիստական պարզ ապրանքային արտադրությունը։

Կ. Մարքսը իր «Կապիտալում» շատ որոշակի ցույց է տալիս, որ կապիտալի նախասկզբնական կուտակումը պետք է կապել ոչ թե կապիտալիզմի, այլ ֆեոդալիզմի հետ, պետք է քննության առնել այն ոչ թե կապիտալիզմի, այլ ֆեոդալիզմի շրջանակներում։ Նա գրում է. «Կապիտալիստական կուտակմանը նախորդել է նախասկզբնական կուտակումը[2]... Հետևաբար, այսպես կոչված նախասկզբնական կուտակումը ոչ այլ ինչ է, բայց եթե արտադրողի ու արտադրամիջոցների անջատման պատմական պրոցես։ Նա ներկայանում է իբրև «նախասկզբնական» պրոցես, որովհետև կազմում է կապիտալի ու սրան համապատասխանող արտադրության եղանակի նախապատմությունը»[3]։ Այնուհետև Կ. Մարքսը գրում է. «Արդ, ի՞նչի է հանգում կապիտալի նախասկզբնական կուտակումը, այսինքն նրա պատմական ծագումը։ Որչափով որ նա ստրուկների ու ճորտերի անմիջական փոխարկումը չի վարձու բանվորների, ուրեմն սոսկական ձևափոխումն չի, այնչափով նա անմիջական արտադրողների ունեզրկում, այսինքն սեփական աշխատանքի վրա հիմնված մասնավոր սեփականության քայքայումն է միայն նշանակում»[4]։ Այստեղից պարզ է, որ կապիտալի նախասկզբնական կուտակումը նախորդել է կապիտալիստական արտադրության եղանակին. հետևաբար, նա կարող էր առաջանալ միայն ֆեոդալիզմի

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 204։
[2] К. Маркс, Капитал, т. I, 1928, էջ 371։
[3] Նույն տեղում, էջ 573։
[4] Նույն տեղում, էջ 611։

ընդերքում, որպես անհրաժեշտ նախադրյալ կապիտալիստական արտադրության եղանակի գոյացման։

Հայաստանում X—XIII դարերում կապիտալի նախասկզբնական կուտակման մասին մեր թեզը ժխտելու համար, մեր հակառակորդները միտումնավոր կերպով նախասկզբնական կուտակումը նույնացնում են կապիտալիստական կուտակման, կամ, այլ կերպ ասած՝ կապիտալիստական արտադրության եղանակի հետ։ Ահա նրանց ֆորմալ տրամաբանությունը, նախասկզբնական կուտակումը կապիտալիզմ է, իսկ կապիտալիզմ Հայաստանում, անշուշտ, չի եղել, հետևաբար Հայաստանում չէր կարող լինել և նախասկզբնական կուտակում։

Այդ կարգի մոտեցում է ցուցաբերում հարցին նաև Ա. Հովհաննիսյանը։ Այսպես, առաջադրելով նախասկզբնական կուտակման և կապիտալի կուտակման ինչ-որ «միաձուլում», այլ կերպ ասած՝ ներկայացնելով նախասկզբնական կուտակումը որպես կապիտալի կուտակում, նա անցնում է իր սիլոգիզմի երկրորդ նախադրյալին, այն է՝ Հայաստանում «չէր ստեղծվում տակավին նոր, բուրժուական կամ կապիտալիստական կացութաձև»։ Այստեղից էլ նրա մտահանգումը՝ Հայաստանում չէր կարող լինել կապիտալի նախասկզբնական կուտակում։

Ա. Հովհաննիսյանը գրում է. «Ինարկե կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսը չի կարելի նույնացնել կապիտալի կուտակման նորմալ պրոցեսի հետ. այս չի նշանակում սակայն, թե այդ պրոցեսները իրարից տարանջատված են դարերի անջրպետով, ինչպես այդ պատկերացնում են մեր տեսաբաններից ոմանք։ Նախասկզբնական կուտակման պրոցեսը ոչ միայն նախորդում է, այլև պատմականորեն միաձուլվում կապիտալի կուտակման, այլ խոսքով՝ կապիտալիստական արտադրության և վերարտադրության նորմալ պրոցեսի հետ։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման ելակետը, Մարքսի ուսուցման համաձայն, բանվորի ստրկացումն էր»[2]։ Եթե ճշմարիտ է, որ նախասկզբնական կուտակումը, այն է՝ արտադրողի անջատումը արտադրության միջոցներից և հարստությունների կուտակումը փոքրամասնության ձեռքին, ոչ թե արտադրության այս կամ այն ձևն է, որևէ արտադրական եղանակ, այլ պատմական նախադրյալ՝ կապիտալիստական արտադրական եղանակի անցման համար, ապա պարզ է, որ անհնարին է պատկերացնել կապիտալի նախասկզբնական կուտակման և կապիտալի կուտակման «միաձուլումը»։ Ասել, որ դրանք իրարից «տարանջատված» չեն «դարերի անջրպետով», նույնպես սխալ է։ Եղել են երկրներ, որտեղ իրոք այդ երկու պրոցեսները «տարանջատվել են դարերի անջրպետով» և եղել են երկրներ, որտեղ անցումը տեղի է ունեցել համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում։ Վերջապես, եղել են երկրներ, որտեղ առաջացած նախասկզբնական կուտակումը չի հանգել կապիտալիստական կուտակման, կապիտալիզմի առաջացման նախադրյալները այս կամ այն պատճառով չեն ծնել կապիտալիստական արտադրության եղանակ։

Ըստ Ա. Հովհաննիսյանի ստացվում է այնպես, որ բանվորը պետք է վերածվի ստրկի, որպեսզի առաջ գա կապիտալիզմ, մինչդեռ Կ. Մարքսի մոտ

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 204։
[2] Նույն տեղում, էջ 206։

խոսքը բանվորի, ավելի ճիշտ, անմիջական արտադրողի, ստրկացման ձևափոխության մասին է, ազատ վարձու աշխատավորի առաջացման մասին։

Ա. Հովհաննիսյանը գրում է. «Փողային—ապրանքային հարաբերությունները այդ շրջանում ընդգրկում էին ոչ թե արտադրական, այլ փոխանակային հարաբերությունների ոլորտը։ Գյուղի և քաղաքի միջև կար արդեն աշխատանքի բաժանում և ապրանքափոխանակություն. սակայն արտադրողները վաճառքի էին հանում ոչ թե իրենց աշխատուժը, այլ իրենց աշխատանքի արդյունքը»[1]։

Հեղինակը սխալվում է, երբ «փոխանակային հարաբերությունների ոլորտը» անջատում է արտադրական հարաբերությունների ոլորտից։ Նա մոռանում է, որ այդ երկուսը մեկ միասնական պրոցեսի իրողություններ են, որ մեկը առանց մյուսի տեղի ունենալ չի կարող, մոռանում է, որ ապրանքային հարաբերություններ ասելով, մենք անխուսափելիորեն հասկանում ենք ապրանքային արտադրություն՝ իր շուկայական, կամ այլ կերպ ասած՝ փոխանակային հարաբերություններով։ Ինչ վերաբերում է արտադրողների՝ «իրենց աշխատանքի արդյունքը» վաճառքի հանելուն, ապա պետք է որ Ա. Հովհաննիսյանի համար ընդունելի լիներ այն ճշմարտությունը, որ արտադրողի աշխատանքի արդյունքը վաճառքի հանելը ինքնին պայմանավորված է «ապրանքային հարաբերությունների արտադրական ոլորտով»։ Սխալը ավելի է խորանում, երբ մեր հեղինակը պնդում է, թե «Ֆեոդալական տնտեսությունը կապված էր երկրի արտաքին և ներքին շուկաների հետ, սակայն ապրանքա-փողային հարաբերությունները չէին փոխում ֆեոդալական շահագործման բնատնտեսական բնույթը»[2]։ Ա. Հովհաննիսյանը զարմանալի կերպով անտեսում է հարցի էությունը, այն փաստը, որ բնատնտեսությունը ինքը ենթարկվում էր քայքայման, և բնատնտեսության փոխարեն առաջ էր գալիս ապրանքային արտադրություն, որը տալիս էր հակադիր երևույթ էր։

Անհրաժեշտ էր հաշվի առնել քաղաքների առաջացումը, հատկապես այնպիսի քաղաքների, որոնց բնակչությունը հարյուր հազարից անցնում էր։ Դրանք ինքնին ապացույց են երկրում ծայր առած խոշորագույն տնտեսական և այլ տեղաշարժների։ Քաղաքը, իր հերթին, չէր կարող չներգործել գյուղի տնտեսական կացության վրա, թեկուզ այն պատճառով, որ գյուղը կապված էր քաղաքի հետ տնտեսական կապերով, քաղաքի արհեստագործության արտադրանքի կարիքն ուներ, որին բավարարելու համար պիտի իր հերթին ապրանք արտադրեր։ Բացի դրանից, քաղաքը իր շուկայական հարաբերություններով ներգործում է ֆեոդալի տնտեսության վրա, ենթարկելով այն համապատասխան փոփոխության։ Այսպիսով, խոշոր կալվածատիրությունը իր ապրանքային արտադրությամբ ամբողջությամբ հարմարվում էր ներքին և արտաքին շուկայի պահանջներին։

Քաղաքային արդյունագործության մեջ տեղի էր ունենում աշխատանքի չափազանց լայն բաժանում։ Առաջացել էին հարյուրից ավելի արհեստագործական արտադրության տեսակներ, այնպիսի մասնագիտացված խոշոր արհեստանոցներ, որտեղ աշխատանքի բաժանումը կատարվում էր ոչ միայն ըստ արհեստագործական արտադրության առանձին ճյուղերի մասնագիտացման, այլև, պետք է ենթադրել, որ արտադրության միևնույն ճյուղում առանձին աշ-

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 208։
[2] Նույն տեղում, էջ 209։

խաղողը մասնագիտանում էր աշխատանքային առանձնակի պրոցեսներ կատարելու մեջ։ Այս հանգամանքը չէր կարող առաջ չբերել արտադրության տեխնիկական կատարելագործում, արտադրողական ուժերի զարգացում ընդհանրապես։

Ուշագրավ է հատկապես մետաղագործությունը։ Հայաստանը մետաղագործության կենտրոններից մեկն էր ժամանակի առաջավոր երկրների մեջ։ Նրա արտադրանքը միջազգային շուկայում կարևոր տեղ էր բռնում։ Այսպես, փաստ է, որ Հայաստանը 1285 թ. պայմանագրով պարտավորվում էր հանձնել Եգիպտոսին տարեկան 10,000 կտոր քառակող երկաթ։ Նույնը կարելի է ասել նաև հայկական գործվածքների և գորգագործության մասին։ Ապրանքային արտադրությունը Հայաստանում այնպես է ծավալվել, որ անհրաժեշտություն է եղել, ինչպես ցույց են տալիս արաբական աղբյուրները, օտար երկրներից Հայաստան ներմուծել հում նյութ, որից պատրաստված ապրանքը վաճառքի էր հանվում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում[2]։ Այս պայմաններում անթույլատրելի է մտածել, թե հում նյութի մատակարարումը կատարվում էր առանց առևտրական կապիտալի մասնակցության։ Ավելին, տարակույս չպետք է լինի, որ առևտրական կապիտալի ներկայացուցիչները արդյունագործությանը հում նյութ մատակարարելով, նրանց կախման մեջ էին դնում իրենցից, կազմակերպում էին արտադրության այսպես կոչված տնային սիստեմը։ Այդ են վկայում Մխիթար Գոշի Դատաստանագրքում և մեր մատենագրության մեջ ամենին հայտնի բաղմիցս կրկնվող հիշատակությունները պատվիրատուների կողմից արհեստագործությանը հում նյութ մատակարարելու մասին։

X—XIII դարերում Հայաստանի տնտեսական կյանքի փոփոխության ցուցանիշներից մեկն էլ աճող դրամական շրջանառությունն էր, վաշխառուական կապիտալի՝ վաճառականական կապիտալի այդ երկվորյակի, երևան գալը։ Դրամական շրջանառությունը, հասկանալի է, գոյություն ուներ նաև առաջ, բայց այս շրջանում ձեռք էր բերել նոր հատկություն. այն է՝ վաշխառուն պատմական նոր պայմաններում կապվել էր առևտրական և արտադրական կյանքի հետ. դարձել էր տնտեսական կյանքի անհրաժեշտ գործոններից մեկը։

---

[1] Ակադ. Հ. Օրբելին գրում է. «В Эрмитаже есть памятник-водолей в форме коровы, изготовленный Ширванским царевичем. Этот предмет материальной культуры стоит на грани перехода от индивидуального выполнения к производству, рассчитанному на многочисленные повторения: в этом предмете основная часть выполнена в приемах старого индивидуального производства, а служебная деталь — ручка — изготовлена с использованием модели, рассчитанной на повторное производство подобного ряда ручек, но уже не для данной коровы или ей подобных фигур, а любого иного кувшина, нуждающегося в массивной по форме ручке».

Այս փաստից Հ. Օրբելին եզրակացնում է. «Есть случаи в истории техники, когда даже единичный документ может иметь решающее, общее значение, и дата изготовления этого водолея—август 1206 г. ...Введение новых технических приемов, стремление ускорить и удешевить производство на рынок усиливало необходимость введения большей дифференциации труда, распределения трудовых процессов между многими участниками работы» (И. Орбели, Басни средневековой Армении, Москва, 1956, էջ 36—37)։

[2] Տե՛ս Հ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հիշատակություն Բ. Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում» գրքում, Երևան, 1938, էջ 292։

Հայտնի է, որ վաշխառուական կապիտալը առևտրական կամ այլ գործարքների ժամանակ, մասնավորապես երկրից դուրս դրամական մեծ փոխադրումների դեպքում, կատարում էր բանկային կապիտալի ֆունկցիաներ։

Հայաստանում առևտրական ու վաշխառուական կապիտալը իր զարգացմամբ հանդիսանում էր այն նախադրյալը, որը տրամաբանորեն տանում էր դեպի արդյունաբերական կապիտալի գոյացումը։ Սակայն այդպես չի մտածում Ա. Հովհաննիսյանը, նա գրում է հետևյալը. «Ոմանց մոլորության մեջ է ձգել այն փաստը, որ XII—XIII դարերում մեզանում կատարվում էին բանկային տիպի առևտրա-ֆինանսական գործողություններ, ինչպես մուրհակների զեղչում, չեկերով կատարվող փոխանցումներ և այլն... պիտի դիտենք դարձյալ, որ այս կարգի փաստերը ևս ընդգրկում են ոչ թե զարգացած ֆեոդալիզմի արտադրական, այլ փոխանակային հարաբերությունների ոլորտը։ Դրանք պատկանում են այն երևույթների շարքին, որոնք ցույց են տալիս ոչ թե այն, թե արտադրական ինչպիսի՞ հարաբերություններ էին իշխում երկրում կամ ի՞նչ նոր կացութաձև էր սաղմնավորվում այդ ժամանակ, այլ միայն այն, թե ինչ ձև էին ընդունում արտադրանքի առևտրական փոխանակությունը, բանկային վճարումները և այլն»[1]։

Ա. Հովհաննիսյանը այս դեպքում ևս անջատում է «փոխանակային ոլորտը» արտադրական ոլորտից։ Նա չի ընդունում, որ իր իսկ կողմից հիշատակված շուկայական հարաբերությունները, դրամական շրջանառությունը և այդ հիման վրա առաջացած բանկային գործարքները՝ մուրհակների զեղչումները, փոխանցումները չեկերով, առևտրական բորսաները, կարող էին առաջ գալ միայն և միայն զարգացած ապրանքային արտադրության պայմաններում, որոնք չի կարելի բացատրել բնատնտեսությանը հատուկ արտադրական հարաբերություններով։

Հասարակության բոլոր խավերը ունեին փողի անհրաժեշտություն։ Փողի կարիք էր զգում նաև գյուղացիական լայն մասսան, քանի որ կային հարկեր, որոնք գանձվում էին փողով։ Դա բացատրվում է նրանով, որ ռենտայի նատուրալ ձևերը վերածվում էին դրամականի, ինչպես այդ հատուկ է ֆեոդալիզմից կապիտալիզմի անցման շրջանին, մի հանգամանք, որ գյուղացիությանը ստիպում էր իր արտադրանքի որոշ մասը շուկա հանել[2]։

Ա. Հովհաննիսյանը ճիշտ չէ, երբ պնդում է, թե աշխատավճարը, հատկապես փողային ռենտան, մեծ տարածում չի ունեցել. բավական է կարդալ այն ժամանակվա վիմագիր արձանագրությունները հակառակ եզրակացության

---

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 211։

[2] Այս առթիվ Կ. Մարքսը գրում է. «Под денежной рентой мы разумеем здесь... земельную ренту, возникающую из простого метаморфоза ренты в продуктах, которая в свою очередь была лишь превращенной отработочной рентой. Вместо продукта непосредственному производителю приходится здесь уплачивать собственнику земли (будет ли то государство или частное лицо) цену продукта. Следовательно, уже недостаточно получить избыток продукта в натуральной форме последнего; избыток необходимо превратить из этой натуральной формы в денежную форму. Хотя непосредственный производитель по-прежнему продолжает производить сам, по крайней мере наибольшую часть своих средств существования, однако часть его продукта должна теперь быть превращена в товар, произведена как товар. Следовательно, характер всего способа производства более или менее изменяется» (К. Маркс, Капитал, т. III, ч. II, 1928, Москва, էջ 271—272)։

հանդելու համար։ Այսպես, օրինակ, դրամական ռենտայի անցման մասին են խոսում 903 թ. Վանեվանի, 901 թ. Մարենոցի, 1010 թ. Մաստարայի և ուրիշ շատ լապիդար արձանագրություններ։ Այդ վիմական արձանագրությունները, ինչպես և մեր մատենագիրները, հանդամանորեն խոսում են այն ժամանակվա վիթխարի քանակությամբ նյութական արժեքների կուտակումների մասին, նրանք հիշում են նաև հասարակության այն խավը՝ մեծատուններին, ժամանակի առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչներին, որոնք իրենց ձեռքերում կենտրոնացրել էին կուտակված հարստությունը։ Նրանք նույնիսկ ցույց են տալիս այդ սոցիալական շերտի առանձին ներկայացուցիչների՝ Դավթակին, Հոնենցին, Սահմադինին, Ումեկին և դրանց նմաններին։ Այսպես, Դավթակի գանձերը կազմել են քառասուն ուղտի բեռ, Ումեկը գնել է Գետիկը քառասուն հազար կարմիր ոսկեղենով, Սահմադինը 1264 թ. կանխիկ դրամով գնել է Երևան քաղաքը, հայտնի են Տիգրան Հոնենցի անսահման քանակի նվիրատվությունները զանազան վանքերի, որոնք խոսում են նրա հսկայական հարստության մասին։

Անի քաղաքի վաշխառուներից մեկը՝ Սահիր Դիվանին, հետևյալ կերպ է արտահայտվում իր գործառնությունների մասին. «Ինձ մոտ առձեռն ոչ մի դրամ չկա, քանի որ ես հիմարների պես ոսկին հողում չեմ թաղում։ Այն բոլորը, ինչ որ ես ձեռք եմ բերել, ներդրել եմ իմ կալվածքներում եկամուտ ստանալու համար, իսկ այժմ իմ միջոցներն այնքան են, որ ամեն օր դրանցից ստացվող եկամուտը կազմում է հազար դինար»[2]։ Այս մեջբերումը կապված Սահիր Դիվանու գործառնությունների հետ, մեր կողմից օգտագործվել է առաջներում[3]։ Ա. Հովհաննիսյանը այդ առթիվ գրում է. «Համաձայն մարքսիստական ուսմունքի, ֆեոդալիզմի բացասումը», նրա «թաքցումը» ծայր է առնում կապիտալիստական հարաբերությունների սկզբնավորումից։ Սակայն ընկ. Զալոյանը այս հարցում ունի այլ տեսակետ։ Ֆեոդալիզմը բացասելու, այն թաքցնելու համար բավական է, որ իր ոսկին հորելու տեղ մեկը կալվածներ ձեռք բերի, քաղաքներ գնի հնչուն եկամուտ դանձելու նպատակով։ Ընկ. Զալոյանի կարծիքով Սահիր Դիվանը ոչպես նման տիպի մի մեծատուն, ինքյան արդեն «կապիտալ» էր կուտակում և նպաստում մոնղոլների ժամանակ իշխած ֆեոդալական այն կարգերի բացասման, որի առավել կարկառուն ներկայացուցիչներից մեկն էր հենց ինքը, մեծավարթամ այդ մեծատունը, Սահիր Դիվանը։ Փույթ չէ, որ այդ մեծատունը զործադրում էր զնած կալվածները և իր կուտակած դրամը ոչ թե կապիտալիստական եղանակով, այսինքն արտադրության

[1] «Այս տեսակետից ևս,— գրում է Ա. Հովհաննիսյանը,— խոշոր տարբերություն ենք նկատում մեր և եվրոպական երկրների միջև, ուր զարգացած ֆեոդալիզմի շրջանում գերակշռում էր փողային ռենտան. թեպետև մի շարք երկրներում, ինչպես Պրուսիայում և Ռուսաստանում, գերիշխող նշանակություն էր ստանալու աշխատավճար ռենտան» («Պատմա-բանասիրական հանդես», էջ 209)։ Ուրեմն մեր և եվրոպական երկրների միջև եղել է «խոշոր տարբերություն», թեպետև Եվրոպայի «մի շարք երկրներում» նույն աշխատավճար ռենտան է եղել։ Ահա տարբերության և նույնության հասկացության բմբռնումը ընկ. Ա. Հովհաննիսյանի կողմից։ Այդ նույն էջում մեր հեղինակը գրում է. «Ֆեոդալի հողային հարաբերություններ մեծապես կուտակվում էր նորա կամ կախյալ գյուղացիներից ստացած հացահատիկների, կաթնամթերքների, բամբակի և այլ արդյունքների զանձումով» (նույն տեղում)։ Պարզապես անհնարին է հասկանալ, թե ինչպես կարելի է պատկերացնել հողային հարաբերության կուտակումը մթերքների զանձումով։

[2] Рашид-ад дин, Сборник летописей, т. III, М.—Л., 1946, էջ 115։

[3] Տե՛ս «Տեղեկագիր», 1958, № 11։

միջոցների համակենտրոնացման, վարձու աշխատանքի մասսայական շահագործման, այլ իր ձեռք բերած նորանոր քաղքենի նպատակների կամ իրեն «հայրենիք» դարձած կալվածներին գամված գյուղացիների ֆեոդալական սանձարձակ հարկման և կեղեքման ճանապարհով։ Ընկ. Զալոյանը անգիտանում է, որ կալվածքներ, գյուղեր, ագարակներ, ավաններ և քաղաքներ գնող այս տիպի մեծատունները ոչ միայն չէին քայքայում կամ բացասում ֆեոդալիզմը, այլ իրենց փողի «ներդրումներով», և սոցիալ-տնտեսական իրենց ամենօրյա պրակտիկայով միայն նպաստում և սպասարկում էին ֆեոդալական հարաբերությունների վերարտադրման և դրանց հետագա զարգացմանը»[1]։

Նախ ֆեոդալիզմի «քայքայման» մասին։ Ճիշտը այն է, որ մենք, հակառակ Ա. Հովհաննիսյանի, գտնում ենք, որ ֆեոդալիզմի քայքայումը «ծայր է առնում» ոչ թե «կապիտալիստական հարաբերությունների սկզբնավորումով», այլ դրանից շատ առաջ, դեռ այն ժամանակ, երբ հին հասարակության (ֆեոդալիզմի) ընդերքում ստեղծվում են նախադրյալներ նոր հասարակության (կապիտալիզմի) առաջացման համար։ Հեղինակը իր սխալ ըմբռնումը վերագրում է մարքսիզմին, իսկ մեր կողմից իր այդ ըմբռնման ժխտումը հայտարարում որպես խոտորում մարքսիզմից։ Մեր վերը բերված այդ նույն քաղվածքում հեղինակը փորձում է ժխտել մեզ, ասելով, թե Սահիր Դիվանին իր հարստությունը չէր կուտակում «կապիտալիստական եղանակով», այսինքն «արտադրության միջոցների համակենտրոնացմամբ» և «վարձու աշխատանքի մասսայական շահագործման» ճանապարհով։ Ստացվում է այնպես, որ իբր թե մենք Սահիր Դիվանուն և նմաններին ներկայացրել ենք որպես կապիտալիստական արտադրության եղանակի ներկայացուցիչների։ Մինչդեռ մենք ցույց ենք տվել, որ առևտրա-վաշխառուական կապիտալը արդեն կապվել էր արտադրության հետ, Սահիր Դիվանու իսկ վկայությամբ մենք ունենք կապիտալի ներդրում արտադրության մեջ։ Երբ Սահիր Դիվանին ասում է, թե փողը «ներդրել եմ իմ կալվածքներում եկամուտ ստանալու համար», նա, անշուշտ, դրանով չի բացահայտում գործող արտադրության եղանակը. սակայն այդ փաստը անվիճելիորեն ցույց է տալիս փողի լայն շրջանառությունը կապված արտադրության հետ, արտադրության ապրանքային բնույթը, ինչպես և վարձու աշխատանքի այս կամ այն չափի գործադրությունը։

Այդ բոլորը ոչ թե «նպաստում և սպասարկում էին ֆեոդալական հարաբերությունների վերարտադրությանը», ինչպես մտածում է Ա. Հովհաննիսյանը, այլ քայքայում են ֆեոդալիզմը, նրա ընդերքում նախադրյալներ ստեղծում նոր հասարակարգի անցման համար, անկախ նրանից, թե Սահիր Դիվանին ու նրա նմանները ինչ տիտղոսներ կամ պետական պաշտոններ ունեին հայրենի կամ օտար տիրակալների մոտ և անկախ այն բանից, որ նրանք միաժամանակ չէին խորշում գյուղացիներին ֆեոդալական եղանակով «հարկման և կեղեքման» ենթարկելուց։

Սահիր Դիվանին մեկն էր այն մեծատուններից, որոնք X—XIII դարերի ընթացքում ֆեոդալական հասարակության ներսում հանդես եկան որպես մի նոր սոցիալական շերտ։ Սահիր Դիվանին ոչ թե մի եզակի անձնավորություն էր, որն իր ոսկին հորելու տեղ եկամուտ դանձելու նպատակով կալվածքներ էր ձեռք բերում, այլ ներկայացուցիչը այն առևտրա-վաշխառուական խավի, որը վճռական դեր էր խաղում երկրի սոցիալ-տնտեսական կյանքում։ Այդ խավն

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 212—213։

էր, որ հետզհետե ուժեղանալով, իրենից կախման մեջ էր գնում տոհմական ֆեոդալական կալվածքները։ Հաճախ այդ կախման հարաբերությունները այնպիսի ձևեր էին ընդունում, որ ֆեոդալական կալվածքները մեկը մյուսի հետևից դառնում էին առևտրա-վաշխառուական խավի սեփականություն։ Ֆեոդալների ժառանգական հողատիրությունը՝ նրանց գյուղերն ու կալվածքները դառնում էին վաճառքի առարկա։ Դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ ֆեոդալիզմի քայքայում։

Փոթել կամ նույնացնել այս նոր առաջացած մեծատունների սոցիալ-դասակարգային շերտը ֆեոդալների՝ այդ ժառանգական հողատերերի հետ, նշանակում է անդիտանալ պատմության զարգացման օրինաչափությունը, չտեսնել երկրի այն ժամանակվա հասարակական կյանքի զարգացման տենդենցը։

Ահա թե ինչ է գրում Ա. Հովհաննիսյանը առևտրա-վաշխառուական խավի մասին. «Առևտրա-վաշխառուական կապիտալը գործիր է դառնում ոչ թե կապիտալիստական, այլ ֆեոդալական հարստության կուտակման... նա (Վարդան Այգեկցին—Վ. Ջ.) խոսում է գույքերի ու կալվածների հափշտակման մասին, որոնք փոխում են ոչ թե հասարակության ֆեոդալական կացութաձևի արտադրահարաբերությունները, այլ սոսկ ֆեոդալ սեփականատերերի անձնակազմը»[1]։ Դուրս է գալիս, որ առևտրա-վաշխառուական կապիտալի կուտակումը «ֆեոդալական հարստության կուտակումն է», իսկ առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչները նույն ֆեոդալներն են, փոխվել է միայն նրանց անձնակազմը։

Մինչդեռ իր այդ նույն հոդվածի նախորդ էջում Ա. Հովհաննիսյանը տվյալ ժամանակաշրջանը սահմանում է որպես «ապրանքաշրջանառության արծարծման դարաշրջան»[2]։ Մեր կարծիքով, սխալ է նոր, ապրանքային արտադրության դարաշրջանը հանգեցնել ֆեոդալական հարաբերությունների կրկնության, ֆեոդալների սոսկ անձնակազմի փոփոխության, նույնացնել բարձրացող առևտրա-վաշխառուական բուրժուազիան և ֆեոդալական դասակարգը։

Ապացուցելու համար, որ առևտրա-վաշխառուական բուրժուազիան պատկանում է ֆեոդալական դասակարգին, Ա. Հովհաննիսյանը հենվելով Մաթեոս Ջուղայեցու վրա, բերում է իր կարծիքով այնպիսի «անառարկելի փաստեր», որոնք վերջնականապես և մեկընդմիշտ «լուծում» են հարցը։ Ահա այդ փաստերը՝ ներկայացված հեղինակի կողմից մեր դեմ ուղղված հոդվածում. «Իրենց կենցաղով ու հագուստ—կապուստով սրանք («նորափառ» մեծատունները) ոչնչով չէին տարբերվում հայրենատեր ֆեոդալներից. նրանց սլես լվանում էին և օծում իրենց գլուխները, կոկում միրուքները. հագնում բեհեղ ու ծիրանի, բանեցնում մետաքսե թաշկինակ, կանայք շպարվում սնդուրով ու սպիտակադեղով»[3]։ Այսպիսով, երկու տարբեր սոցիալ-դասակարգային շերտերի մոտ տղամարդկանց միրուքների միատեսակ կոկումը, կանանց մոտ երեսների միատեսակ շպարումը նրանց դասակարգային նույնության ծանրակշիռ «ապացույցներ» են համարվում[4]։

---

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 207—208։

[2] Նույն տեղում, էջ 204։

[3] Նույն տեղում, էջ 213։

[4] Մենք հակապատմական ենք համարել Ա. Հովհաննիսյանի այն թեզը, թե առևտրա-վաշխառուական կապիտալի առանձին ներկայացուցիչների պարոն դառնալը կամ այլ կարգի ֆեոդալական տիտղոսներ ու կոչումներ ձեռք բերելը դարձնում էր նրանց ֆեոդալներ, «նորելուկ»

Այժմ խոսենք X—XIII դդ. Հայաստանում կատարված սոցիալական տեղաշարժերի մի այլ կողմի, արտադրության միջոցներից արտադրողների զրկման պրոցեսի մասին։

Այն ժամանակվա աշխարհի ուժեղները՝ ֆեոդալները և առևտրական ու վաշխառուական խավերից եկած տիրակալները գյուղացիական ծիսերի հողն ու գույքը զավթելու նպատակով դիմում էին բռնի և տնտեսական հարկադրանքի, գյուղացիությանը ունեզրկման ենթարկելու ամեն տեսակ միջոցների։ Հենց այդ է վկայում ժամանակակից Արիստակես Լաստիվերտցին, երբ հաստատում է, որ հարուստները հափշտակում էին աղքատների տներն ու դաշտերը, «Զտունս տնակեաց (տնանկաց) աղքատացն ու զսահմանս անդաստանաց նոցա յափշտակէին մեծատունքն»[1]։ Գյուղացիների այդ կողոպուտի մեջ հետ չէին մնում նաև հայ եկեղեցու «սուրբ հայրերը», որոնք անդուլ կերպով հող էին տանում եկեղեցու հողատարածությունների ընդարձակման մասին ի հաշիվ գյուղացիների ունեզրկման։

Սոցիալական նույն երևույթը ապացուցելու համար մենք իր ժամանակին հիշատակել ենք նաև հետևյալ փաստերը։

Գյուղացիների ունեզրկման պրոցեսի անմիջական հետևանքն է գյուղից քաղաք մեկնող չքավորության հարաճուն հոսանքը։ Այսպես, Անի մայրաքաղաքի պեղումները ցույց տվին, որ շքեղ բնակարանների կողքին այնտեղ գոյություն են ունեցել նաև գետնափոր հյուղեր, որ քաղաքի ծայրամասերում մարդիկ ապրել են նույնիսկ քարայրներում։ Մառի կողմից կազմած պեղումների հաշվետվության մեջ կարդում ենք. «Աշխատավոր, բանվոր բնակչությունը, ինչպես ցույց են տալիս պեղումները, պատսպարվում էին ավերակներին հարմարեցված աղքատիկ հյուղերում և քարքարոտ հողում փորված փոսերում»[2]։ Իսկ Անին հարյուր հազարից ավելի բնակչություն ուներ, որի զգալի մասը արտադրության միջոցներից զրկված, բայց իրենց աշխատուժը վաճառելու հարցում ազատ չքավորներ էին։ Այդ նշանակում է, որ քաղաքում երևան էր եկել մարդկանց մի նոր խավ, հետագա պրոլետարիատի նախորդները։ Դրանք դեռևս նախորդներ էին, քանի որ չէին ներգրավվել քաղաքի արտադրական կյանքի մեջ և այդ արտադրական կյանքը դեռևս չէր հասունացել գյուղից քաղաք մեկնող մարդկանց հոսանքը կլանելու համար։ Պրոլետարիատի այդ նախորդներին բաժին էր ընկնում մուրացողի, գողի կամ ավազակի ծանր ճակատագիրը. այդ մասին պատմում են հայկական աղբյուրները, մասնավորապես X դարի վերջի և XI դարի սկզբի հեղինակ Ստեփանոս Տարոնեցին, որը

ֆեոդալներ։ Մենք նշել ենք, որ Ա. Հովհաննիսյանը սխալվում է, երբ ձեռք բերած դասային իրավունքները նույնացնում է տնտեսական և դասակարգային կեցության հետ, երբ չի տեսնում, որ նորելուկ մեծատունները՝ հոնենցները, ումեկները, սահմադինները և դրանց նմանները իրենց տնտեսական կեցությամբ զարգանում էին ոչ թե դեպի հետ, դեպի ֆեոդալիզմ, այլ միայն առաջ, դեպի կապիտալիզմ, որ հետադարձ շարժումը անհնարին էր, հակապատմական (տե՛ս «Տեղեկագիր», 1958, № 11, էջ 107—108)։ Իրենին հասկանալի է, որ Ա. Հովհաննիսյանը, որպես գիտական ճշմարտության հետախույզ, պետք է կամ ընդուներ այդ ճշմարտությունը, կամ առարկեր մեզ, բերելով փաստեր ու արգումենտներ։ Սակայն նա այդպես չի վարվում, այլ հայտարարում է, թե «հարկ չկա այդ խնդիրների վրա կանգ առնել»։ Մենք հարցնում ենք՝ ինչո՞ւ, որովհետև անհնա՞ր է վիճել ըստ էության։

[1] Ար. Լաստիվերտցի, Պատմութիւն, 1912, էջ 79։

[2] Н. Я. Марр, Ани, Москва, 1934, էջ 28—29։

հայտնում է, թե դեպի Կարս տանող ճանապարհներին և բուն Կարսում տարօրինակ չափեր էին ընդունել քաղաքում կուտակված ամրոխի կատարած գիշերային ավազակություններն ու կողոպուտները[1]։

Ա. Հովհաննիսյանը մեր կողմից բերած այս փաստերին տալիս է այլ մեկնություն. «Գյուղացիների մասսայական հողազրկման ու գույքազրկման փաստն ինքյան դեռ նշան չէր կապիտալի նախասկզբնական կուտակման։ Կապիտալի նախասկզբնական կուտակման ժամանակ Արևմտյան Եվրոպայում գյուղացիների ունեզրկումը ոչ միայն վերջ էր դնում նրանց համայնքային կամ մասնավոր հողատիրությանը, այլև նախապայման դառնում նրանց աղատագրման և կապիտալիստական շահագործման ենթակա բանվորական ուժի գոյացման... Այլ բնույթ ուներ և այլ հետևանք ունեցավ գյուղացիների ունեզրկման փաստը Հայաստանում։ X—XIII դարերում Հայաստանի վանական կամ աշխարհիկ կալվածատիրությունը ազարակային տնտեսության բնույթ էր ստանում մեծապես հենց գյուղական համայնքների ունեզրկման ճանապարհով։ Սակայն ներկա դեպքում արտադրամիջոցներից պոկ դալը գյուղացի արտադրողներին չէր դնում գյուղական բանվորների վիճակում։ Գյուղացիների կողմից հողից պոկ գալը ֆեոդալական դաժան շահագործման կամ գյուղացիների խստաշար հոդամրացման դեմ ցույց տրվող սոցիալական դիմադրության հետևանքներից մեկն էր և ոչ մի կերպ կապված չէր այսպես կոչված «կապիտալի նախասկզբնական կուտակման» հետ... Հայտնի է, որ անմիջական արտադրողը միայն այն ժամանակ է հնարավորություն ստանում տնօրինելու իր անձը, երբ դադարում է նրա ամրացումը հողին և նրա ճորտական կախումը ֆեոդալից։ Մեզ զբաղեցնող դարերում Հայաստանի համար բնորոշը ոչ թե հողազավթումների կապիտալիստական պրակտիկան էր, կամ գյուղացու աղատագրումը ֆեոդալական կապանքներից, այլ, ընդհակառակն, գյուղացու ֆեոդալական հողամրացումը, նրա անձնական աղատության ֆեոդալական կաշկանդումն ու նրա ֆեոդալական կեղեքման սաստկացումը»[2]։

Այս երկար մեջբերման մեջ ճշմարիտը միայն այն է, որ ընդգծվում է պատմական փաստը՝ գյուղացիների ունեզրկումը, գյուղացի արտադրողների «արտադրամիջոցներից պոկ դալը», անշուշտ, հափշտակումների, բռնի միջոցների գործադրումով։ Սակայն հեղինակի մոտ չկա հստակ պատկերացում կապիտալի նախասկզբնական կուտակման մասին ընդհանրապես։ Նախասկզբնական կուտակումը մերթ ներկայացվում է որպես «նախապայման... բանվորական ուժի գոյացման», մերթ «հողազավթումների կապիտալիստական պրակտիկա», որի տակ հասկացվում է արտադրողների վերածումը «գյուղական բանվորների վիճակի»։ Բայց և այնպես պարզ է, որ մեր հեղինակը ժխտում է գյուղացիների ունեզրկման հետևանքով բաղարներում чернь-ի առաջացումը որպես նախադրյալ կապիտալիստական արտադրության առաջացման։ Սա սխալ թեզ է, որը ժխտվում է վերը բերած մեր փաստերով (Անիի պեղումների արդյունքները և մատենագիրների վկայությունը)։ Դեռ ավելին, փաստ է, որ այդ чернь-ից առաջացել էին վարձկաններ ու մշակներ, սոցիալական մի կատեգո-

[1] Տե՛ս «Սա. Տարօնեցւոյ Ասողիկ պատմութիւն տիեզերական», 1885, գլ. ԺԷ, էջ 196—197։

[2] «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 209—210։

լիա, որ գյուղում և քաղաքում վաճառքի էր հանում իր բանվորական ուժը[1]։ Բանվորական ուժի վաճառքը այնքան տարածված է եղել, որ քաղաքներում հիմնվել են հատուկ տեղեր վարձկանների կամ մշակների վարձման համար[2]։

Անհասկանալի է Ա. Հովհաննիսյանի միտքը այն մասին, թե գյուղացիների ունեզրկումը կամ նրա բառերով ասած՝ «արտադրամիջոցներից պոկ գալը» նրանց հասցրեց ոչ թե «գյուղական բանվորի» դրության, այլ ագրարային տնտեսության։ Հեղինակը չի բացատրում, թե ինչ է նա հասկանում, երբ գրում է, թե գյուղացիների ունեզրկումով առաջացավ ագրարային տնտեսություն։ Եթե գյուղացիների «արտադրամիջոցներից պոկ գալը» նրանց չդրեց «գյուղական բանվորի» դրության մեջ, ապա սոցիալական ի՞նչ վիճակ ստեղծվեց այդ անմիջական արտադրողների համար։ Ա. Հովհաննիսյանը իրեն նեղություն չի տվել պատասխանել իր իսկ դրած հարցերին։

Վերջապես, սխալվում է Ա. Հովհաննիսյանը, երբ գտնում է, որ «ճորտական կախումը ֆեոդալից» ինքնին նախասկզբնական կուտակման հնարավորության ժխտման փաստ է։ Այդ միտքը ավելի վաղ ուղղել են մեր դեմ նաև ուրիշները, դրա հերքումը մեր կողմից հայտնի է Ա. Հովհաննիսյանին։ Ստիպված ենք կրկին հիշեցնել. Հայաստանում X—XIII դարերում ճորտատիրությունը չնչին զարգացում է ունեցել, մեր մատենագիրների մոտ շատ սակավ են հիշատակությունները ճորտատիրության մասին։ Այնուամենայնիվ, անկասկած, գյուղացիության որոշ մասը ամրացված է եղել հողին։ Սակայն սխալ է այն պնդումը, թե ճորտատիրության գոյության այդ փաստը կարող էր խոչընդոտել ֆեոդալիզմի ընդերքում նրա բացասման տարրերի առաջացմանը։ Ո՞վ չգիտե,

---

[1] Մենք Վերածնության հարցին նվիրված մեր հոդվածներից մեկում (տե՛ս «Տեղեկագիր», 1955, № 12), օգտագործել ենք վարձկանների վերաբերյալ ընկ. Լ. Խաչիկյանի երևան բերած ուշագրավ ձեռագրական մի տվյալ. «Ժողոր են վարձկանք փոյթ առնել գործոյն մերձ գալով վերակացուին»։ Այստեղից մենք հետևցրել ենք, որ միևնույն արտադրական ձեռնարկությունում աշխատել են այնպիսի քանակությամբ վարձու աշխատողներ, որ անհրաժեշտ է եղել նրանց նկատմամբ հսկողություն սահմանել ի դեմս հատուկ պաշտոնատար անձի՝ վերակացուի։ Լ. Խաչիկյանը այս առթիվ 1958 թ. «Տեղեկագրի» № 3-ում գետեղած իր հոդվածում առարկում է մեզ։ Նա գտնում է, որ, նախ՝ բերված ձեռագրական տվյալը պատկանում է Գր. Տաթևացուն, Բայց մի՞թե դրանից որևէ բան կարող է փոխվել։ Երկրորդ՝ այդ տվյալը «վերաբերում է երկրագործական աշխատանքների համար վարձված մշակներին», որովհետև, գրում է Լ. Խաչիկյանը, «եթե իրոք Հայաստանում եղած լինեին մանուֆակտուրային տիպի արտադրական ձեռնարկություններ, որոնցում, մի հարկի տակ, այն էլ, ինչպես կարծում է ընկ. Զալոյանը, մի քանի վերակացուների հսկողությամբ աշխատեին, ապա այդ վերակացուները միշտ էլ «կերևային» վարձկաններին ու շարունակ կհսկեին նրանց աշխատանքը, ուստի և Տաթևացին «չէր գրի իր այդ նախադասությունը» (էջ 49)։ Լ. Խաչիկյանը իր դատողության մեջ ճիշտ չէ. վերակացուն մանուֆակտուրային արտադրության մեջ կարող էր ընկնել այնպիսի պայմանների մեջ, որ վարձկաններից անանջատ չլիներ։ Սակայն ենթադրենք, թե Գր. Տաթևացին, իրոք, նկատի է ունեցել երկրագործության մեջ աշխատող վարձու մշակներին. այդ դեպքում այն հետևությունը, որ մենք արել ենք բերված ավյալից քաղաքի արդյունագործության վերաբերյալ, պիտի տարածել նաև գյուղատնտեսության վրա։ Հանրահայտ փաստ է, որ վարձու աշխատանքն ու նրա հետ կապված բոլոր երևույթները, որոնք վերաբերում են արտադրական հարաբերություններին, առաջ են գալիս նախ քաղաքի արդյունագործության, հետո միայն գյուղատնտեսության մեջ։ Ուրեմն Լ. Խաչիկյանը կամենալով ժխտել մեր հետևությունը, ավելի է խորացրել այն, վարձկանների ու վերակացուների առկայությունը տարածելով նաև գյուղատնտեսության մեջ։

[2] «և եկեալ գնայ ի տեղի մշակացն, զի կալցին գնայ ի վարձու» կարդում ենք այն ժամանակվա հայկական առակներից մեկում։ Տե՛ս «Притчи Вардана», т. II, изд. Н. Я. Марра, էջ 147։

որ Ռուսաստանում ճորտատիրությունը շարունակում էր իր գոյությունը մինչև 1861 թ., մինչդեռ նույն ճորտատիրական Ռուսաստանում կապիտալի նախասկզբնական կուտակումը սկսվել էր դեռևս XVII դարից։ Ուրեմն ճիշտ չէ նախասկզբնական կուտակման առաջացումը կապել ճորտատիրության վերացման հետ, ինչպես այդ անում է Ա. Հովհաննիսյանը՝ ընթանալով ուրիշների սխալ հետքերով։

Հենվելով Մարքսի այն եզրակացության վրա, որ կապիտալի նախասկզբնական կուտակման պրոցեսը մարդկության տարեգրության մեջ գրված է անլուր շահագործման, հարստահարության, կողոպուտի, բռնի ուժի գործադրության, կեղծիքի և խարեությունների, փարթամության և չքավորության լեզվով, մենք այդ նույնը ցույց ենք տվել Հայաստանի իրականության մեջ։ Բերենք մի քանի փաստեր, որոնք հիշատակված են մեր նախորդ հոդվածում, ուրեմն և ծանոթ են Ա. Հովհաննիսյանին, որոնց վրա, սակայն, նա հասկանալի պատճառով կանգ չի առնում։ Անին սելջուկների կողմից ավերվելու առթիվ Արիստակես Լաստիվերտցին գրում է. «Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինին զինքեանս արեամբ օտարաց, և ի քրտանց տնանկաց փարթամանան, և ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամրացուցանեն»[1]։

Ար. Լաստիվերտցու վկայությունը հաստատում է Հովհաննես Սարկավագը. «Այնոցիկ որ պայծառ և պատուական զգեստիկ զարդարեալ են զինքեանս ի քաղաքի և հպարտանան ի վերա աղքատաց և ծառայեցուցանեն իրրև զձիս ի դաղաղ լծին չարչարելով զնոսա»[2]։ Վարդան Այգեկցուն են վերագրվում հետևյալ խոսքերը. «Շահագործման և յուրացման արատը ամենավատթարն է ու անողորմը, որովհետև դա ժանիքներ ու ճանկեր ունեցող կատաղի ու հաղար գլխանի մի գազան է։ Այդ գազանը ծծում է աղքատների ու տնանկների արյունը և կործանում նրանց ...նայեցեք և հիշեցեք, թե որքան ուժեղ են գործում դաղտնի ու բացահայտ, կամա և ակամա գոփողականությունը, յուրացումն ու ճնշումը հրապարակներում, վաճառանոցներում, շուկաներում, խանութներում, ճանապարհների խաչմերուկներում և լեռնանցքներում, մաքսատներում, գողություն անելիս և կաշառք վերցնելիս, վաշխառություն անելիս և աշխատողներ վարձելիս, չափի և կշռի մեջ և այլ գործերում և վայրերում»[3]։ Այգեկցուն է վերագրվում նաև հետևյալ բնորոշ միտքը. «Օ, Աստված, ինչու ես մարդկանց այդպես ստեղծել... ինչպես խոշոր ձկները ծովում կուլ են տալիս մանրերին, այնպես էլ նրանց մեջ ունևորները կլանում են աղքատներին», «ոսկին անխոս մտնում է դատարանի դահլիճը և իր փայլով նվաճում է դատավորի սիրտը»[4]։

Քննելով Հայաստանի X—XIII դարերի պատմա-տնտեսական կյանքի զարդացման ընթացքը, տեսնում ենք, որ Հայաստանը գտնվում էր հասուն ֆեոդալական հասարակության ստադիայում։ Սակայն ֆեոդալական հասարակության բարձրագույն ստադիան պետք է ծներ նախադրյալներ արտադրության նոր եղանակի առաջացման համար։ Անկարելի է, որ հնի ավարտը իր մեջ չկրեր նորի ծագման սկիզբը, այդպես է հակադրությունների միասնության դիալեկտիկան։ Նոր արտադրական եղանակի անցման համար հնի ընդերքում այդպիսի

[1] Ար. Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 166—167։

[2] Մատենադարան, ձեռ. № 2595, էջ 263բ։

[3] Նույն տեղում, ձեռ. № 8356, էջ 47բ։ Մենք օգտվել ենք Գ. Միրայելյանի «История Киликийского армянского госуд рства» գրքից էջ 224։

[4] Մատենադարան, ձեռ. № 8356, էջ 164, 167։ Գ. Միրայելյան, էջ 218։

նախադրյալներ էին արտադրության միջոցներից արտադրողի անջատման պրոցեսը, հսկայական հարստությունների կուտակումը փոքրամասնության ձեռքում, ամենից առաջ աշխատավորների ամենադաժան շահագործման հիման վրա, մի պրոցես, որը հասցրեց կապիտալի նախասկզբնական կուտակման։

Ճիշտ է, որ կապիտալի նախասկզբնական կուտակումը Հայաստանում թեզը մենք ենք առաջադրել, սակայն եթե դրա տակ հասկանանք ֆեոդալիզմի ընդերքում կապիտալիստական հասարակության առաջացման նախադրյալների գոյացումը, ապա այդ միտքը շատ հին է և պաշտպանություն է գտել բոլոր խոշորագույն պատմաբանների կողմից, ինչպիսիք են Ն. Մառը, Հ. Օրբելին, Հ. Մանանդյանը, Ն. Ադոնցը և շատ ուրիշներ։

Ուրեմն Ա. Հովհաննիսյանը ճիշտ չէ, երբ գրում է, թե հայ կուլտուրայի, գրականության ու փիլիսոփայության որոշ ուսումնասիրողներ, «տրամադրված լինելով X—XIII դարերի հայ փիլիսոփայության մտքի կամ գրականության ու արվեստի հուշարձանները համարել հայկական Ռենեսանսի կամ վաղ Ռենեսանսի արտահայտություն,... պահանջ էին զգում նաև որոնել կամ ավելի ճիշտ՝ լաստակերտել դրան սպգական սոցիալ-տնտեսական պատվանդան։ Այդ պահանջի արդյունքն էր, որ փորձեր արվեցին հայտնագործելու միջնադարյան Հայաստանում կապիտալիզմի սաղմնավորման և ֆեոդալիզմի քայքայման, այլ խոսքով, կապիտալի նախասկզբնական կուտակման փաստեր»[1]։ Ա. Հովհաննիսյանը պետք է իմանար, որ Ն. Մառը, Հ. Օրբելին, Հ. Մանանդյանը, Ն. Ադոնցը ճշմարտությանը հետախույզ պատմաբաններ են, որոնք գրել են և հիմնավորել հայկական աշխարհում ֆեոդալիզմի քայքայման ու կապիտալիզմի առաջացման նախադրյալների մասին, առանց պահանջ զգալու Վերածնության համար հարմար պատվանդան հնարելու։

* * *

Կապիտալի նախասկզբնական կուտակման շրջանը բնորոշ է իր վճռական մարտերով ֆեոդալիզմի դեմ, և դա հասկանալի է։ Եթե դա մի հասարակություն էր, որտեղ հարուստները ավելի էին հարստանում, իսկ աղքատներն ավելի աղքատանում՝ բռնության և շահագործման վայրագ մեթոդների պատճառով, եթե անհավասարությունն ու անարդարությունը հասել էին ահավոր չափերի, ապա պետք է սոցիալ-դասակարգային պայքարը ևս նոր որակի արտահայտություն ունենար։

Այդպիսին էր ֆեոդալական հասարակության բուն հիմքերը ցնցող Ռոնդրակյան շարժումը գյուղում և քաղաքում, տիրող կարգերի դեմ ուղղված մասսայական այն ապստամբությունները, որոնք պիտի դիտել որպես ֆեոդալիզմի դեմ ուղղված առաջին վճռական ճակատամարտներ։

Կապիտալի նախասկզբնական կուտակման շրջանը իրեն հատուկ դասակարգային պայքարով պայմանավորեց հայկական Վերածնությունը, ճիշտ այնպես, ինչպես այդ տեղի ունեցավ ավելի ուշ շրջանում Արևմուտքում[2]։ Վերածնության հասկացության մեր սահմանումը տրված է մեր այն աշխատության

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 202։

[2] Ըստ Ֆ. Էնգելսի, Վերածնության էպոխան սահմանվում է նրանով, որ «գրվում են հիմքեր ավելի ուշ ժամանակվա համաշխարհային առևտրի և արհեստից մանուֆակտուրային անցնելու համար» (Ֆ. Էնգելս, Մնության դիալեկտիկա, 1950, էջ 7)։

մեջ[1], որը քննության է առնում Ա. Հովհաննիսյանը։ Հիշեցնենք, որ հայկական Վերածնությունը մենք դիտում ենք ոչ թե որպես ազգային կուլտուրայի գերազանցություն, այլ ֆեոդալիզմի դեմ վճռական պայքարի արդասիք, մի նոր որակի աշխարհայեցողություն՝ նոր պատմական պայմաններում, նոր սոցիալ-տնտեսական հիմքերի վրա։ Այսպես, եթե համեմատելու լինենք Հռիփսիմեի տաճարը Մարմաշենի տաճարի հետ, կտեսնենք, որ առաջին հուշարձանը շատ ավելի մոնումենտալ և բարձր վարպետության գործ է, քան երկրորդը։ Սակայն Մարմաշենը, որպես արվեստի հուշարձան, իր աշխարհայեցողական հիմունքներով բոլորովին տարբեր երևույթ է։ Հռիփսիմեի տաճարի արվեստը խարբսխված է ֆեոդալական աշխարհայեցողության վրա, իսկ Մարմաշենինը՝ Վերածննդի։ Նույն երևույթը կարելի է տեսնել և Արևմուտքում։ Այնտեղ, ասենք Փարիզի Նոտր-Դամը կամ թե Ռեյմսի տաճարը իրենց արվեստի վարպետությամբ և մոնումենտալ մտահղացմամբ անհամեմատ բարձր են, քան Վերածնության կուլտուրային պատկանող շատ և շատ կոթողներ։ Ո՞ւմ հայտնի չէ, որ գոթիկան իր աշխարհայեցողական հիմունքներով տարբեր է Վերածնության ճարտարապետական հուշարձաններից։ Եթե գոթիկան փնտրում էր կատարյալ ձևեր, որոնց միջոցով վեր խոյանա դեպի ամենակատարյալը՝ առ աստված, ապա Վերածնությունը ներկայացնում էր ռեալը, բնության, աշխարհի ռեալականության մեջ հավասարաչափ փնտրելով թե՛ մարդուն, թե՛ աստծուն։ Վերածնությունը ոչ միայն երևան էր բերում անհատի և հասարակության հակասությունները, ինչպես այդ անում էր գոթիկան, այլև պայքարում էր հասարակության դեմ՝ ֆեոդալական աշխարհի ու նրա գաղափարների դեմ։ Մի՞թե նույնը չեն մեզ մոտ Գրիգոր Նարեկացու, Կոստանդին Երզնկացու, Թորոս Ռոսլինի և մյուսների արվեստի աշխարհայեցողական հիմունքները, ռեալիզմը և ինդիվիդուալիզմը նրանց ստեղծագործության մեջ։

Ա. Հովհաննիսյանը իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» գրքում այն միտքն է հայտնել, թե կապիտալիզմի և համազգային կենտրոնացված իշխանության բացակայության պայմաններում անհնարին է խոսել Վերածնության մասին, ուրեմն և հայկական Վերածնություն հասկացությունը «լիակատար թյուրիմացություն է», «անտեղի և հակագիտական» տերմինների գործածություն։ Մենք մեր հոդվածում[2] ցույց ենք տվել, առաջին՝ որ Վերածնությունը ոչ թե հաջորդել, այլ նախորդել է կապիտալիստական արտադրական եղանակին և, երկրորդ՝ համազգային կենտրոնացված իշխանության գոյությունը նույնպես անհրաժեշտ նախապայման չէ Վերածնության առաջացման համար։ Այսպես, հայտնի է, որ Իտալիան, Վերածնության այդ կլասիկ երկիրը, ծայր աստիճան մասնատված էր։ Ուրեմն ոչ թե մենք, այլ Ա. Հովհաննիսյանն է մեղանչում պատմական իրողության առաջ։ Եթե Ա. Հովհաննիսյանը նորից է հանդես գալիս այս հարցերի շուրջը, ապա նա պիտի առաջ քաշեր նոր հիմնավորումներ։ Սակայն նա այդպես չի վարվում, այլ ձգտելով անպայման ժխտել հայկական Վերածնությունը, «հնարում է» նոր «փաստարկումներ»։ Ա. Հովհաննիսյանը գրում է. «Պատմաքննական անկողմնակալ ու աննախապաշար ապագա հետազոտությունները պիտի կարողանան ակներև դարձնել, որ այդ դարերում Հայաստանի և հարևան երկրների փիլիսոփայության, գիտության, արվեստի և գրականության մեջ չի կատարվել որևէ հեղաբեկում, որ

[1] Տե՛ս «Տեղեկագիր», 1955, № 12։
[2] Նույն տեղում, 1958, № 11, էջ 108։

զարգացած ֆեոդալիզմի պայմաններում այս կամ այն չափով կատարված չի-ներ նաև Արևմուտքում՝ նախքան այդտեղ կսաղմնավորվեր կապիտալիզմը կամ նախքան այդտեղ ծայր կառներ կապիտալի նախասկզբնական կուտակումը»[1]։

Ստացվում է հետևյալ պատկերը։ X—XIII դարերում Արևելքը («Հայաստանը և հարևան երկրները») գտնվել է զարգացման այն մակարդակին, ինչ որ նույն ժամանակաշրջանում արևմտյան երկրները։ Եվ ինչպես որ չի կարելի Արևմուտքի զարգացման այդ նույն շրջանի համար խոսել նրա Վերածնության մասին, այդպես էլ խոսք չի կարող լինել Վերածնության մասին՝ Արևելքում։ Սակայն Արևելքը մնում է իր տեղում, իսկ Արևմուտքը ընթանում է առաջ, հասնում կապիտալիստական հարաբերությունների մակարդակին և ապրում իր Վերածնությունը։ Ա. Հովհաննիսյանը անտեսում է, որ «Հայաստանը և հարևան երկրները»՝ այսինքն, Արևելքը, X—XIII դարերում գտնվում էին ավելի զարգացած մակարդակի վրա, քան Արևմուտքը, որ Հայաստանը և հարևան երկրները իրենց սոցիալ-տնտեսական կյանքի և կուլտուրայի զարգացմամբ ներկայացնում էին ֆեոդալական հասարակության այն ստադիան, որը իր ընդերքում արդեն հասունացրել էր նախադրյալներ կապիտալիստական արտադրական հարաբերությունների ու նրան ադեկվատ կուլտուրայի անցման համար։ Այդտեղից է գալիս դասակարգային պայքարի զարգացման նոր աստիճանը Արևելքում, վճռական մարտերը՝ քայքայվող ֆեոդալիզմի դեմ և վերջապես աշխարհայեցողության մեջ այն «հեղաբեկումը», որը կոչվում է Ռենեսանս, որը և արտահայտվել է փիլիսոփայության, արվեստի ու գրականության մեջ[2]։ Միաժա-

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 222։

[2] Ակադ. Հ. Մանանդյանը գրում է. «Численность населения крупных городов Багратидской Армении было значительно больше, 10—20 тысяч средней численности средневековых городов Европы, и можно, следовательно, думать, что по количеству жителей они значительно превышали эти города» (Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, էջ 222)։ «Продукция ремесленной и художественной промышленности, найденная во время раскопок, ярко показала, что культурная жизнь Ани и городов Багратидской Армении находилась на более высоком уровне развития, чем в средневековых городах Западной Европы» (Նույն տեղում, էջ 213)։

Նույն միտքը պաշտպանում է ակադ. Ն. Ի. Կոնրադը։ Նա գրում է. «Китайская, индийская, арабская, иранская, среднеазиатская культура в этот период как во многих областях техники и материальной культуры, особенно—в искусстве, так и в области законодательства, политических учений, философии, историографии, науки и художественной литературы развились раньше и были долгое время богаче по содержанию, чем все эти области культуры на Западе» (Н. И. Конрад, «Средние века» в исторической науке. См. «Сборник статей из истории», Соц.-политиздат АН СССР, Москва, 1955, էջ 95)։

Ահա և մեկ ուրիշ վկայություն. «Так же как и в период раннего средневековья, в XII и XIII вв. культура Китая, Индии, стран Ближнего Востока и Византии стояла значительно выше западноевропейской» (Н. А. Сидорова, Очерки по истории ранней городской культуры во Франции, Москва, 1953, էջ 471)։

Մենք կարող ենք հարցը կոնկրետացնել Հայաստանում Վերածնության շրջանի արվեստի շուրջը՝ վկայակոչելով Թորոս Ռոսլինի սաեղծագործությունը, որը կարելի է դնել, հավասար մակարդակի վրա Արևմուտքի վաղ Վերածնության արվեստի ներկայացուցիչների՝ Նիկոլո և Ջովանի Պիզանոների, Ջոտտոյի և մյուսների արվեստի հետ։ Նույնը կարելի է ասել և գիտության, ինչպես և փիլիսոփայության վերաբերյալ։ Ինչ վերաբերում է գրականությանը, ապա այդ մասին սպառիչ պատասխան ունի Վ. Բրյուսովը։ Նա գրում է.

«Аскетический идеал средневековья, взгляд на эту земную жизнь, как на юдоль скорби, уверенность, что радости жизни — скверна и грех, остались где-то далеко по-

մանակ ընդգծում ենք, որ Արևելքում ինչպես որ սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացումը չբարձրացավ մինչև կապիտալիզմ, այնպես էլ «հեղաբեկումը» կուլտուրայի մեջ չբարձրացավ ավելի, քան վաղ Վերածնության մակարդակն էր։ Զարգացման կատեցման հիմնական պատճառը թուրք-թաթարական հորդաների արշավանքներն էին, որոնց նմանը չկար Արևմուտքում և որտեղ XIII դարից հետո, սկզբում Միջերկրական ծովի երկրներում, իսկ ավելի ուշ՝ Եվրոպայի հյուսիսային մասերում առաջ եկավ ֆեոդալիզմի քայքայման և կապիտալի նախասկզբնական կուտակման շրջան և դրա զարգացման աստիճանին էլ համապատասխան՝ վաղ և զարգացած Վերածնություն։

Մեր քննադատության մեջ լինենք բարեխիղճ։ Ա. Հովհաննիսյանը նույն էջի վրա գրում է այն ժամանակվա Հայաստանի իրականության մեջ կատարված «սոցիալ-տնտեսական խոր տեղաշարժների» մասին, մի հանդամանք, որ պայմանավորել է իրենով «գրական և կուլտուրական հեղաբեկումը ու վերելքը»։ Ավելին, նա գտնում է, որ «Արևելքի և հատկապես Մերձավոր Արևելքի ժողովուրդներն իրենց մասնակցությունն են ունեցել արևմտաեվրոպական ֆեոդալիզմի անկման և կապիտալիզմի առաջացման նախապատրաստման մեջ և յուրովի ազդել այդ երկրներում ծաղկած Ռենեսանսի կամ վաղ Ռենեսանսի վրա»։

Ա. Հովհաննիսյանը, սակայն, իր իսկ գրած հարցերին չի կամենում տալ համապատասխան որակում։ Նրա փոխարեն այդ կանենք մենք, կբացատրենք, որ Հայաստանում «սոցիալ-տնտեսական խոր տեղաշարժների» տակ պետք է հասկանալ կապիտալի նախասկզբնական կուտակման առաջացումը, հայկական «կուլտուրայի հեղաբեկման և վերելքի» տակ պետք է հասկանալ Վերածնությունը, և, վերջապես, Արևելքի ազդեցությունը Արևմուտքի վրա պետք է հասկանալ մեկից մյուսի միջև եղած զարգացման հաջորդական կապը՝ տընտեսական հարաբերությունների փոխանցման, ֆեոդալիզմի դեմ պայքարի, ինչպես և Վերածնության կուլտուրայի բնագավառներում։

Ա. Հովհաննիսյանը առարկում է թոնդրակյան շարժումը որպես հայկական ռեֆորմացիա դիտելու մեր մտքին։ Միայն զարմանալ կարելի է, թե ինչպես Ա. Հովհաննիսյանը մի ինքնու նախադասությամբ ձեռնարկում է լուծել այդ ինքնին բարդ պրոբլեմը։ Ահա նրա միակ դատողությունը. Թոնդրակյան շարժումը ռեֆորմացիա չէր, քանի որ Անգլիայում ռեֆորմացիայի ժամանակաշրջանում կաթոլիկական եկեղեցուն պատկանող հողերը ենթարկվել են բռնագրավման և օտարացման, մինչդեռ Հայաստանում թոնդրակեցիները կռվում էին իր կալվածքներն ընդարձակող հայ եկեղեցու «հարստահարչական տենդենցների դեմ»։ Թյուրիմացություն է ռեֆորմացիայի տակ հասկանալ սոսկ պապական հողերի գրավումը Անգլիայում, և ինչու պետք է ռեֆորմացիայի գաղափարը սահմանափակվի միմիայն Անգլիայով։ Ինչպե՞ս է ընթացել ռեֆորմացիան Գերմանիայում, Չեխիայում, մյուս երկրներում, ի՞նչ ուղղություններ են եղել, որո՞նք են նրա շարժիչ ուժերը և պայքարի մեթոդները—այս հար-

---

зади. По силе, по энергии стиха и языка, поэма (Конст. Ерзынкаци. — В. Ч.) сделала бы честь любой литературе Западной Европы того века, и Европе даже нечего ей противопоставить. А по духу, пронизывающему поэму, она всеми своими частями принадлежит великому веянью Возрождения» (В. Брюсов, Поэзия Армении, Москва, 1916, էջ 50).

[1] «Պատմա-բանասիրական հանդես», 1939, № 1, էջ 222։

ցերը մեր հեղինակը չի գնում։ Նա անտեսում է, որ ռեֆորմացիան իր ձևով իշխող եկեղեցու, նրա դոգմաների ռեֆորմն էր, ըստ բովանդակության նա ֆեոդալական հասարակության իշխող սոցիալական կարգերի դեմ ուղղված պայքար էր, և այդ պայքարը եկեղեցու և ընդհանրապես ֆեոդալիզմի դեմ տարբեր երկրներում տարբեր ձևով է դրսևորվել։ Եղել են երկրներ, որտեղ ռեֆորմացիան իրենից ներկայացրել է սոցիալական և ազգային-ազատագրական պայքարի միահյուսում, այլ դեպքերում ռեֆորմացիան ունեցել է «բյուրգերական», չափավոր-բուրժուական ուղղություն, և վերջապես, պատահել է նաև այնպես, որ ռեֆորմացիան արտահայտել է պլեբեյական-գյուղացիական պայքարի ուղղությունը։

Մեր այն աշխատությունը, որի դեմ ուղղված է Ա. Հովհաննիսյանի հոդվածը, հանգամանորեն ցույց է տալիս այն բոլոր գծերը և հատկանիշները, որոնք բնորոշում են ռեֆորմացիան՝ իր դրսևորման հեղափոխական-դեմոկրատական պայքարի ուղղության մեջ։ Այդ նույն գծերը և հատկանիշներն էին հատուկ նաև հայկական ռեֆորմացիային՝ թանդրակյան շարժմանը[1]։ Եթե Ա. Հովհաննիսյանը կամենում է առարկել, ապա նա պետք է քննության առնի մեր հոդվածը ըստ էության, վերլուծի մեր տեսակետը, գիտական և պատմական արգումենտներով բացասի այն, եթե հնարավոր է բացասել։

* * *

Ա. Հովհաննիսյանը իր «Դրվագներ...» գրքում բացահայտել է X—XIII դարերում հայկական ֆեոդալիզմի քայքայման և կապիտալի նախասկզբնական կուտակման առաջացման փաստը, ընդգծել է, որ հայ հասարակությունը այդ ժամանակաշրջանում «գտնվել է իր զարգացման նախակապիտալիստական ոլորտում»։ Միաժամանակ իր ընդհանրացումների ու եզրակացությունների մեջ նա մերժում է այդ բոլորը, և խոսում ֆեոդալիզմի ամրապնդման, մեծատունների առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչների ֆեոդալական բնույթի և առհասարակ երկրի դեռևս շատ հետամնաց լինելու մասին։ Իսկ այդ հարցերի քննադատությունը մեր կողմից Ա. Հովհաննիսյանը համարում է «բռնաձիգ մեջբերումներ», «հակադիտական մանիպուլյացիաներ», ավելացնելով, որ ինքը «հարկ չի համարում կանգ առնել» դրանց վրա։ Այսպիսով նա հրաժարվում է ցույց տալ, թե ինչու են իր գրքից վերցրած մեջբերումները «բռնաձիգ» և «հակադիտական մանիպուլյացիաներ», այլ կերպ ասած՝ նա չի կարողանում ապացուցել իր ճշմարտացի լինելը։

Ա. Հովհաննիսյանը պնդում է, որ ինքը խոսել է սոսկ «ֆեոդալական փոխհարաբերությունների մեջ սկսված քայքայման և առևտրա-վաշխառուական կապիտալի կուտակման հիման վրա զարգացող ֆեոդալական նոր հարաբերությունների մասին»[2]։ Սակայն չէ՞ որ նա գրել է հետևյալ տողերը. «Ապրանքա-

---

[1] Տե՛ս Վ. Զալոյան, Հայկական Վերածնության մասին, «Տեղեկագիր», 1955, № 1, էջ 104—109։

[2] «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 212։ Անդամ այստեղ, իր պաշտպանության համար արված հայտարարության մեջ, Ա. Հովհաննիսյանը թույլ է տալիս հարցի սխալ պատկերացում. չի կամենում ընդունել, որ «առևտրա-վաշխառուական կապիտալի կուտակման հիման վրա» զարգացած ֆեոդալիզմի պայմաններում առաջ են գալիս ոչ թե «զարգացող ֆեոդալական նոր հարաբերություններ», այլ հակաֆեոդալական հարաբերություններ ֆեոդալիզմի բացասման նախադրյալներ՝ ֆեոդալիզմի խոր ընդերքում։

փոխանակության և դրամաշրջանառության աճման զուգընթաց տեղի էր ունենում առևտրա-վաշխառուական կապիտալի կուտակում ու նրա քայքայիչ ազդեցությունը գյուղի և քաղաքի մանր արտադրողների ու մանր ապրանքատերերի վրա։ Գյուղի և քաղաքի միջև խցկվող վաճառականներն իրենց ձեռքն են առնում գյուղատնտեսական մթերքների և արհեստագործական արտադրանքների փոխանակումը։ Առանց դիմադրության ու պայքարի չէ, որ քաղաքի և գյուղի արտադրողները կախման մեջ էին ընկնում առևտրավաշխառուական կապիտալից»[1]։

Այսպիսով, մենք իրավունք ունեինք ասելու, որ անկախ նրանից, թե Ա. Հովհաննիսյանը ինչ հակասական հայտարարություններ է անում իր եզրակացությունների մեջ, նա ֆեոդալիզմի քայքայման և կապիտալի նախասկզբնական կուտակման թեզի կողմնակից է։ Այս առթիվ նա հայտարարում է, թե մենք դրանով «սփոփում» ենք մեզ, կարծելով, թե ի դեմս Ա. Հովհաննիսյանի ունենք մեր «անհուսալի տեսության» մի կողմնակից։ Սա, իհարկե, գրված հարցի պատասխանը չէ։ Ելնելով նորից նույն հակասական դիրքերից, նա գրում է. «Պատմական փաստերի սառնարյուն վերլուծությունը... կարող է հանգեցնել միայն այն եզրակացության, թե նախընթաց դարերի հայ ֆեոդալներից X—XIII դարերի մեծատունները տարբերանշվում էին միայն նրանով, որ գյուղացիներին ճնշողի ու հարստահարողի, կեղեքողի վիճակին հասնում էին ոչ թե սրի, այլ փողի միջնորդությամբ»[2]։ *Այսպիսով, նա ընդունում է, որ «սրի» էպոխային հաջորդել է «փողի» էպոխան, որ շահագործող մի դասակարգի՝ ֆեոդալների փոխարեն, առաջ է եկել մի ուրիշ շահագործող դասակարգ՝ մեծատունքը, առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչները։ Սակայն Ա. Հովհաննիսյանը չի տեսնում իր դատողության հակասականությունը, երբ միաժամանակ պնդում է, թե «սրի» և «փողի» տիրապետությունների միջև չկա տարբերություն, որ փոփոխությունը, ինչպես ինքն է արտահայտվում, միայն «անձնակազմի» փոփոխություն է, որ մեծատունները նույն ֆեոդալներն են, որոնք ոչ թե քայքայում են ֆեոդալիզմը, այլ ամրապնդում են այն։ Պարզ է, որ այսպիսի հակասական դրույթները գիտության կողմից չեն կարող ընդունվել։*

СНОВА О ПЕРВОНАЧАЛЬНОМ НАКОПЛЕНИИ КАПИТАЛА В АРМЕНИИ

В. К. ЧАЛОЯН

(Резюме)

Полемизируя с академиком Аш. Иоаннисяном, автор статьи утверждает, что в период X—XIII вв. в феодальной Армении появились предпосылки к становлению нового способа производства. Имеется в виду процесс отделения непосредственного производителя от средств производства и накопление огромных богатств в руках торгово-ростовщической прослойки общества. Именно на основании наличия этих двух факторов в социально-экономической жизни Армении того периода возникает процесс так назы-

[1] *Ա. Հովհաննիսյան, Դրվագներ..., էջ 235—236։*
[2] *«Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1, էջ 212։*

ваемого первоначального накопления капитала. Такая социально-экономическая база не могла не привести к крайнему обострению классовой борьбы в стране. Растет недовольство крестьян и городских трудовых масс, которое перерастало в вооруженные выступления, направленные против господствующих классов феодального общества.

Эти обстоятельства и обусловливали перелом в мировоззрении во всех формах проявления общественного сознания, перелом, который есть не что иное, как Возрождение в искусстве, литературе и философии.